

— Յանուն Յովհաննէս քահանայի Քրիստափորեան Չալթըր գեղջ Ն. Նախիջևանի, որով պարգևատրեցաւ Լանջախաչիւ թ. 9.

— Կամիլաւկայի յանուն Մուշեղ քահանայի Վարդապետեան Շուշույ թ. 36.

— Աւագ քահանայութեան յանուն Յովհաննէս քահանայի Տ. Գրիգորեան Շուշույ թ. 37.

— Լանջախաչի յանուն Խորէն քահանայի Իսկանդարեան Շուշույ թ. 38.

— Լանջախաչի յանուն Մեսրոպ քահանայի Ապրէսեան Շուշույ թ. 39.

— Կամիլաւկայի յանուն Մաղաթիա քահանայի Տ. Գրիգորեան Խնուշինակ գեղջ թ. 40.

— Աւագ քահանայութեան-յանուն Յարութիւն քահանայի Վարդապետեան Շուշույ թ. 41.

— Ս և Ճաղկեայ կերպանեայ փիլոնի յանուն Տ. Արտակ վարդապետի, գործակալին Ն. Բայազիդու թ. 87.



ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՅՕԳԻ ԹՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սինոդը գեկտեմբերի 18-ին ստանալով նահանգական կառավարութեան գրութիւնը Արթիկ գիւղի նոր եկեղեցու շինութեան թոյլտուութեան մասին, որոշեց ծանուցանել այդ Երևանի վիճակային Կոնսիստորիային և վերադարձնելով հաստատուած յատակագիծը, հրամայեց ձեռնարկել տաճարի կառուցման:

Դեկտեմբերի 29-ին Սինոդը լուծեց Թաթիսաբնակ Վառինկա Վանեանցի ամուսնութիւնը Պետրոս Վանեանցի

հետ և վերջինիս իրաւունք տուաւ նորից ամուսնանալու, որի մասին և հրամանագրեց Թիֆլիզի Կոնսիստորիային:

Նոյն թուին Սինօզը մերժեց Կարապետ Տէր Եսայեան Տէր Յովհաննիսեանի ձեռնադրութեան գործը նրա հիւանդութեան պատճառով, որի հիման վրայ նա ազատուած է զինուորագրութիւնից և այս մասին տեղեկացրեց Ղարաբաղի Կոնսիստորիային:

Նոյն թուին Սինօզը քահանայութեան արժանի գտաւ Գեաղուկ Սաթլմիշ գիւղի բնակիչ Մկրտիչ Կիրակոսեանին և որոշեց հայցել Կարսի պ. Նահանգապետի հաճութիւնը:

Նոյն թուին Սինօզը լսելով Վրաստանի և Իմերէթի թեմի Առաջնորդի գրութիւնը նոր պաշտօնեաներ նշանակելու մասին, հրամայեց, նախ Ներքին գործոց տէր Նախարարի գրութեան մէջ ասուած է . . . а также къ приходскимъ должностямъ настоятелей . . . իսկ թարգմանութեան մէջ գրուած է ծխական քահանաներին . . . որ ոչ մի նմանութիւն չունի բնագրի հետ և պէտք է լինի՝ աւագերէցներին, երկրորդ՝ բառնալու համար այն թիւրիմացութիւնները, որոնք կարող են յառաջ գալ, ինչպէս այդ երևում է թեմակալ առաջնորդների յայտարարութիւններից, Սինօզն անհրաժեշտ վարկաւ բացատրել հեհեռեւեալը. Ներքին գործոց Նախարարի գրութիւնը վերաբերում է այն սրբազնագործ պաշտօնեաներին, որոնք նշանակուած են իրենց պաշտօնում և ոչ թէ նրանց, որոնք ընտրուում են մի անգամ և ցմահ ձեռնադրուում և մնում միևնոյն պաշտօնում՝ ինչպէս քահանայք, սարկաւազներ և շտաանի դպիրներ, որոնց համար՝ ձեռնադրութիւնից առաջ Սինօզը դիմում և ստանում է Նահանգապետների թոյլտուութիւն, ուրեմն այդպիսիներին ձեռնադրելիս առաջնորդներն այլ ևս պարտաւոր չեն բանակցութեանց մէջ մտնելու նրանց մասին: Երկրորդ՝ մեր եկեղեցու աւագերէցները ոչ թէ նշանակուում, այլ ձեռնադրութեամբ աւագներն են աւագերէց համարուում, ուստի այս խնդրում բոլորովին պատճառ չկայ նահան-

գապեաների հաճութիւնն հարցնելու. բայց երբ մի վիճակից հարկաւոր լինի փոխադրել քահանաներին մի ուրիշ վիճակ, այդ դէպքում մ'այն պէտք է հարցնել նշանակելի տեղի նահանգապետին՝ Երրորդ. ինչ կը վերաբերի վահայրերին ու փոխանորդներին, նախ պէտք է ստանալ վեհափառ Հայրապետի հաճութիւնը և ապա դիմել ուր հարկն է: Սոյն բացաարութիւնը Սինոդը որոշեց բոլորագրութեամբ տալ բոլոր առաջնորդներին ի հրահանգութիւն:

Դեկտ. 31-ին Սինոդը որոշեց հրամանագրել Երևանի Հայոց Կոնսիստորիային շուտով յետ դարձնել Ներսէս քահանայ Տէր Մինասեանին Նոր-Գորիս գիւղից Հին-Գորիսը՝ իւր ծխականների մօտ, որոնց վրայ և ձեռնադրուած է:

Յունվարի 12-ին Սինոդը որոշեց հրամայել բոլոր Կոնսիստորիաներին, որ մանրամասն հաշիւ ներկայացնեն որբոց և այրեաց հոգաբարձութեան ելեմտից մասին:

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի վիճ. Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Մկրտիչ Տէր սահակեանին Երևանի ս. Յովհաննէս եկեղեցու վրայ քահանայ ձեռնադրելու համար:

Նոյն թուին Սինոդը որոշեց մերժել Ղարաբաղի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Ղազարոս Տէր Գրիգորեանին հոգևոր կոչման մէջ ընդունելու, որովհետև Գանձակի պ. նահանգապետը հաճութիւն չէր տուել այդ մասին:

Նոյն թուին Սինոդը հրամանագրեց բոլոր Կոնսիստորիաներին, որ նրանք մանրամասն ցուցակ ներկայացնեն իրենց թեմերում եղած կուսակրօն և ամուսնացած հոգևորականների մասին:

Նոյն թուին Սինոդը որոշեց ընդունել հոգևորականութեան մէջ և քահանայ ձեռնադրել Փոքր Փարկիթ գիւղի

վրայ Վահրամ Զաքարեանցին, որի մասին և հրամանագրեց  
Ներեանի Կոնսիստորիային:

Յունիարի 24-ին Սինոդը թույլատրեց Վրաստանի և  
Իմերէթի Հայոց Կոնսիստորիային հոգևորականութեան  
մէջ ընդունել և քահանայ ձեռնադրել Բօրչալուի գաւառի  
Գիւլագարակ գիւղի բնակիչ Սարգիս Մարգարեան Մարի-  
կեանցին նոյնաեզի ժողովրդեան վրայ:

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի հա-  
մարելով Մողղոկի բնակիչ Գէորգ Օրդուխանեանցին, որո-  
շեց դիմել Տերէքեան շրջանի նահանգապետին օրինաւոր  
հաճութեան համար, որպէս զի Գէորգը ձեռնադրուի քա-  
հանայ Բաղալպաշինակ քաղաքի հայ ժողովրդի վրայ:

